հատ, թէ ի՞նչ անցեալ է ունեցել նա, դու գիտես, թէ ո՛վ է նա եւ որպիսի՛ տխուր հանգամանքներից ստիպուած ընկաւ նա Պարսկաստան: Կրկնել քեզ այդ ամենը աւելորդ է: Դու գիտես եւ այն, թէ Պարսկաստանում որպիսի աղքատ կեանք էր վարում Աստղաբերդի տէրն ու իշխանը, պահելով իրան բոլորովին անյայտութեան մէջ, մի հասարակ որսորդի անուան տակ: Բայց մի բան չգիտես դու, եւ այդ է, որ ա՛յժմ ես պէտք է պատմեմ քեզ:

Ես բոլոր ուշադրութիւնս լարեցի. նա շարունակեց.

— Դու, ի հարկէ, յիշում ես, Ֆարհատ, որ ես, Կարօն եւ Սագօն՝ երեքս միասին, թողեցինք տէր Թոդիկի դպրոցը եւ անյայտացանք: Անցան տարիներ, մեր հայրենիքում ոչ ոք տեղեկութիւն չունէր մեր մասին: Ամէնքը մեզ կորած էին համարում: Բայց թէ որտե՞ղ էինք այդ ժամանակ, ի՞նչ էինք շինում, այդ դու չգիտես, ահա ա՛յդ է, որ պէտք է պատմեմ քեզ, որովհետեւ դրա հետ կապ ունի այդ ամրոցի տիրոջ, Որսորդի առաքինութեան մի այլ կողմը, որ քեզ յայտնի չէ:

Նա մի քանի րոպէ լուռ կացաւ իր յիշողութիւնները ամփոփելու համար:

— Այո՛... հէնց նոյն օրերում, երբ մենք թողեցինք տէր Թոդիկի դպրոցը, Սալմաստով անցաւ մի ամերիկացի ճանապարհորդ, մի ծերունի գիտնական, որ զանազան ուսումնական նպատակներով ուղեւորութիւններ էր անում Պարսկաստանում: Հիւանդութեան պատճառով նա մի քանի շաբաթ մնաց Սալմաստում: Մի դիպուածով նա ծանօթացաւ Որսորդի հետ: Որսորդը լսելով, որ ծերունի ճանապարհորդը հետաքրքրւում է նաեւ հնութիւններով, ցոյց տուեց նրան մի թուր, որ Բաղդադի հին խալիֆներից մէկի անունն էր կրում իր վրայ: Ամերիկացին բաւական նշանաւոր գումար առաջարկեց այդ հազուագիւտ զէնքը գնելու համար: Որսորդը մերժեց նրա արծաթը, յայտնելով, թէ ինքը մեծ հաճութեամբ կընծայէ նրան այդ զէնքը, եթէ նա կընդունէ կատարել իր մի խնդիրքը: Այդ խնդիրքը կայանում էր նրանում, որ ամերիկացին յանձն առնէր ինձ, Կարօյին եւ Սագօյին տանել իր հայրենիքը եւ այնտեղ տալ մի որեւէ դպրոցում ուսում առնելու: Ճանապարհի ծախքը եւ բոլոր ծախքերը՝ մինչեւ մեր ուսման աւարտելը՝ իր վրայ էր առնում Որսորդը:

— Փող նա որտեղո՞ւց ունէր, — ընդհատեցի ես Ասլանի պատմութիւնը:

— Ունէր: Այդ բերդի կործանման միջոցին նրա գանձը մնաց ծածկուած իր տեղում, թշնամու ձեռքը չընկաւ: Տարիներից յետոյ, երբ նրա մասին ամէն ինչ մոռացուեցաւ, երբ նրան ամէնքը սպանուած էին համարում, նա ուղարկեց Մըհէին այստեղ եւ, իր գանձը դուրս բերելով, փոխադրեց Պարսկաս-